ՎԶԵԲ-ը “Արմսվիսբանկին” հատկացրել է $8 մլն՝ առեւտրի ֆինանսավորման եւ ՓՄՁ վարկավորման համար

27.01.2010թ. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև ստորագրվեց երկու պայմանագիր՝ 5 մլն ԱՄՆ դոլարի շրջանակներում ՓՄՁ վարկավորման (SME Finance facility) և 3 մլն ԱՄՆ դոլարի շրջանակներում Առևտրի ֆինանսավորման (Trade Facilitation Programme) պայմանագրերը:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի խոսքերով, ՎԶԵԲ-ի հետ համագործակցությունը ռազմավարական նշանակություն ունի Բանկի համար և կաջակցի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի մտադրությանը՝ 45%-ով ավելացնել իր վարկային պորտֆելը 2010թ.-ին:
Նա նաև նշեց, որ ստորագրված պայմանագրերը համահունչ են բանկի ռազմավարությանը միջազգային կառույցների հետ սերտ համագործակցության հաստատման առումով:

ՓՄՁ վարկավորման պայմանագիրը հնարավորություն կտա Բանկին մեծացնել փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվող վարկավորման ծավալները: Ծրագրի պայմաններին բավարարող ձեռնարկություններին նախատեսվում է տրամադրել մինչև **5 տարի** մարման ժամկետով, **500,000 ԱՄՆ դոլար գումարը չգերազանցող**, միջինում **14-16%** տոկսադրույքով վարկային միջոցներ: Վարկավորման համար կարող են դիմել այն ձեռնարկությունները, որոնց աշխատակիցների քանակը չի գերազանցում 250-ը: Վարկերը կարող են տրամադրվել այն ձեռնարկություններին, որոնք նախատեսում են ծավալել արտադրության արդյունավետությունը բարձրացնող այնպիսի գործունեություն, ինչպիսիք են՝ նոր արտադրությունների ստեղծումը, արդեն իսկ գործող արտադրությունների վերանորոգումը կամ ընդլայնումը, շրջանառու միջոցների համալրումը և նմանատիպ այլ գործունեություն: Սույն ծրագրի շրջանակներում Բանկի կողմից առավել բարենպաստ պայմաններ կառաջարկվեն այն ընկերություններին, որոնց գործունեությունն ուղղված է արտահանման խթանմանը և ներմուծվող ապրանքատեսակների փոխարինմանը:

Արտահանողների և ներմուծողների համար անհամեմատ նպաստավոր պայմաններով առևտրի ֆինանսավորման պայմանագրի շրջանակներում Բանկը հնարավորություն կունենա թողարկել **ակրեդիտիվներ, երաշխիքներ,** ինչպես նաև տրամադրել **առևտրի ֆինանսավորման այլ գործիքներ**: Առևտրի ֆինանսավորման պայմանագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև **ֆակտորինգային գործառնություններ,** ինչը թույլ կտա ընդլայնել գործող հաճախորդների շրջանակը: Կֆինանսավորվեն **Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղազախստանի** և այլ երկրների հետ արտահանման և ներմուծման գործարքները:

Ըստ ՎԶԵԲ հայաստանյան գրասենյակի ղեկավար՝ Վ. Ռազլոգի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի հետ ստորագրված վարկային համաձայնագրերն ամբողջովին համապատասխանում են ՎԶԵԲ-ի հայաստանյան ռազմավարությանը, որն ուղղված է երկրի բանկային հատվածի ամրապնդմանն ու տնտեսության իրական հատվածին աջակցելուն:

Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը իր հերթին նշեց, որ ֆինանսական ճգնաժամի պայմաններում ՀՀ բանկերը կարողացան վերակառուցել վարկային պորտֆելը՝ նվազող սպառողական վարկերի փոխարեն ռեսուրսները ուղղել փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը, ինչի արդյունքում տեղի է ունեցել բանկերի վարկային պորտֆելների աճ